Ծածկագիր

12-2-ՔՀ9-Մ2-2

Պաշտոնի Անվանում

Գլխավոր հոգեբան

Պաշտոնի Ամբողջական Անվանում

Քրեակատարողական ծառայություն | ՀՀ ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկ | Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժին | Գլխավոր հոգեբան

Անմիջական Ղեկավարի Պաշտոն (Օգտագործվում է վերապատրաստման հատվածում)

Քրեակատարողական ծառայություն | ՀՀ ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկ | Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժին | Բաժնի պետ

Ենթակա և հաշվետու է

Գլխավոր հոգեբանն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր հոգեբանի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս գլխավոր հոգեբանը:

Աշխատավայր

Հայաստան, Շիրակի մարզ գյուղ Հառիճ:

Աշխատանքի բնույթը (գործառույթներ)

1. իրականացնում է այցեր հոգեբանական օգնության կարիք ունեցող կալանա վորված անձանց և դատապարտյալներին.
2. դատապարտյալների դիմումների հիման վրա կատարում է կալանավորված անձանց և դատապարտյալների անհատական ընդունելություն և իրականացնում մասնագիտական խորհրդատվություն.
3. իրականացնում է Հիմնարկում հացադուլ, ինքնավնասում, ինքնախեղում կա տարած կալանավորված անձանց և դատապարտյալների ընդունելություն.
4. իրականացնում է հսկողություն Հիմնարկում հաշվառման վերցված անձանց հետ տարվող աշխատանքների նկատմամբ

5. իրականացնում է հոգեբանական և բացատրական աշխատանքներ Հիմնարկում կալանավորված անձանց և դատապարտյալների կողմից հացադուլ, ինքնավնասում, ինքնախեղում կատարած անձանց հետ

Իրավունքները

1. համապատասխան ստորաբաժանումներից պահանջել դատապարտյալների և կալանավորված անձանց վերաբերյալ լրացուցիչ փաստաթղթեր, հիմնավորումներ, պարզաբանումներ և այլ անհրաժեշտ տեղեկատվություն
2. ներկայացնել առաջարկություններ, դիտարկումներ ու հիմնավորումներ բաժնի պետին դատապարտյալների և կալանավորված անձանց հետ տարվող հոգեբանական աշխատանքների վերաբերյալ.
3. համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ մասնակցել առաջադրված խնդիրների լուծման շուրջ մասնագիտական քննարկումներին.
4. ծանոթանալ դատապարտյալների և կալանավորված անձանց կողմից ներկայացված դիմումների բովանդակություններին, նյութերին.

Պարտականությունները

1. կալանավորված անձանց և դատապարտյալների մոտ հոգեկան հիվանդության նախանշանների, սահմանային վիճակների կամ ինքնավնասման հակումների առկայության դեպքում այդ մասին անհապաղ զեկուցել Բաժնի պետին .
2. կազմել կալանավորված անձանց և դատապարտյալների հետ իրականացված հոգեբանական աշխատանքների վերաբերյալ փաստաթղթերը.
3. տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն Հիմնարկում հացադուլ, ինքնավնասում, ինքնախեղում կատարած կալանավորված անձանց և դատապարտյալների վերաբերյալ.
4. տեղեկացնել Բաժնի պետին հոգեբանական օգնության կարիք ունեցող կալանավորված անձանց և դատապարտյալներին կատարած այցերի արդյունքների մասին.
5. կալանավորված անձանց և դատապարտյալների մոտ հոգեկան հիվանդության նախանշանների, սահմանային վիճակների կամ ինքնավնասման հակումների առկայության դեպքում այդ մասին անհապաղ զեկուցել Բաժնի պետին .
6. կազմել կալանավորված անձանց և դատապարտյալների հետ իրականացված հոգեբանական աշխատանքների վերաբերյալ փաստաթղթերը:

Կրթություն, որակավորման աստիճանը

Ուղղություն: ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ոլորտ: ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՔԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ենթաոլորտ: Հոգեբանություն

Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ
հոգեբանության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ

Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և դիմումների քննարկման արդյունքում որոշումների նախապատրաստման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության տարածքային ազդեցություն:

Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում

Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:

Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
    - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
    - Ծրագրերի մշակում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
    - Բանակցությունների վարում
    - Կոնֆլիկտների կառավարում
    - Բողոքների բավարարում
    - Ժամանակի կառավարում
    - Փաստաթղթերի նախապատրաստում